

Արևիկ

Վարչական դեկավար՝ Վարդկես Մելքոնյան

Հեռ 094928590

Մակերես՝ 15.8կմ²

Բնակչություն՝ 1709

arevik.shirak@mta.gov.am

Արևիկ գյուղը հիմնադրվել է 1815-20թթ:

Գյուղի նախկին անվանումը եղել է Թափադուլակ: Բառը ունի թուրքական ծագում՝ Թափա նշանակում է բարձունք, դուլակ նշանակում է ոչխարների մակադելու տեղ:

1805թ., երբ Շիրակը անցնում է Պարսկաստանից Ռուսաստանի տիրապետության տակ, թվով 12 ընտանիք արևմտյան Հայաստանի Կարնո նահանգի Մուշ, Բասեն, Ալաշկերտ գավառներից գաղթում են ավելի ապահով վայրեր, մասնավորապես Շիրակ: Նրանք հիմնականում եղել են կաթուղիկ դավանանքի: Համայնքին սահմանակից են Բասեն, Այգաբաց, Մեղրաշեն, Ախուրյան, Ազատան համայնքները:

Շիրակի մարզի Արևիկ գյուղը գտնվում է մարզկենտրոն Գյումրիից հարավ արևելք, ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա: Մարզկենտրոնից հեռավորությունը 7կմ է, մայրաքաղաքից՝ 125 կմ: Համայնքի վարչական տարածքը 1580 հա: Ձմռան տևողությունը 6 ամիս է, եղանակը՝ խստաշունչ, ձմռան միջին ջերմաստիճանը 25°C: Գարնանը և աշնանը բնորոշ են քամիները, տեղումների միջին քանակը 200-250մմ: Գյուղն ունի խմելու ջրի պաշար, որը խորքային պոմպերի միջոցով մատակարարվում է ազգաբնակչությանը: Համայնքում բնակչության թիվը 1816 է, 820 տղամարդ, 996 կին:

1843թ գյուղը ձեռնամուխ է լինում Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությանը, որը տևում է գրեթե կես դար: Այս գործում մեծ ներդրում ունի արևիկիցի բնասեր, հայագետ, թարգմանիչ Բարսեղ Մարգարյանը, որը եղել է Մխիթարյան միաբանության տպարանապետը: Գյուղի առաջին քահանան եղել է Տեր Բարսեղը, մինչև 1921թ-ը քաղաքացիական ակտերի/ ծնունդ, ամուսնության և մահվան/ գրանցումները կատարվել են եկեղեցու ծխամատյանում: 1971թ-ին արևիկցի Հակոբ Հովհաննեսի Մինասյանը արժանացել է ԽՍՀՄ «Սոցիալիստական աշխատանքային հերոսի» կոչման:

Գյուղի ապրուստի հիմնական միջոցներն են հողագործությունը, անասնապահությունը և արտագնա աշխատանքը: Արևիկցուն բնորոշ է աշխատասիրությունը: Հանրապետությունում առաջինը Արևիկ գյուղն է 1965թ.-ին արժանանում Կոմունիստական աշխատանքի հաղթողի կոչմանը:

Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել են 250 արևիկցի, որից զոհվել են 122-ը:

1970-80թթ. Գյուղը գազաֆիկացվում է, գործում է հեռախոսակապը: Գյուղը այժմ էլ գազաֆիկացված է և կապույտ վառելիքը օգտագործում է տնտեսությունների 95%:

Բնակչության միջին և երիտասարդ տարիքի (16-60 տարեկան) մարդիկ օգտվում են բջջային հեռախոսակապից: Գյուղի գրեթե բոլոր բնակարաններում տեղադրված են հեռախոսներ:

Գյուղն ունի երկհարկանի տիպային դպրոց:

Գյուղում գործում են մանկապարտեզ /տնակային /, երաժշտական դպրոց, մշակույթի տուն/վթարային/, գրադարան, բուժ. կետ /տնակային/ : Վերջին 3-4 տարիներին գյուղում նկատվում է լուրջ տեղաշարժ դրական առումով, իրականացվել են սոցիալ-տնտեսական նշանակության մի քանի ծրագրեր, որոնք զգալի ազդեցություն են թողել ազգաբնակչության կենսակերպի վրա:

Գյուղ Գյումրիի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 5կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Թափադուլակ, Թափադուլակ, Թեփետուլաք անվանումները: Արևիկ է վերանվանվել 1945 թ-ին:

Գյուղը գտնվում է Շիրակի դաշտում՝ ծովի մակարդակից 1530մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները: Գյուղի շրջակայքում կան բազալտի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն:

Գյուղն ունի նոր շրջանի զանգակատնով կանգուն եկեղեցի: Արևիկից հարավ-արևմուտք և հյուսիս-արևելք կան հին գյուղատեղիներ:

Գյուղը հիմնադրվել է 1810-15թթ Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի և Բասենի շրջաններից գաղթած հայերի կողմից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 159, 1873 թ-ին՝ 625, 1922 թ-ին՝ 1498, 1959 թ-ին՝ 1489, 1970 թ-ին՝ 1532, 1979 թ-ին՝ 1455 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 1709 մարդ: Մեռային կազմում տղամարդիկ կազմում են 45%, կանայք՝ 55%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ.

մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 52%, հետաշխատունակներ՝ 19%: Ունի 315

տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են Շիրակի ջրանցքի ջրերով: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 888հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 50 և 290 հեկտար: Զբաղվում են պտղաբուծությամբ, հացահատիկային, բանջարաբուստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Նախկինում մեծ մակերես են զբաղեցրել շաքարի ճակնդեղի ցանքատարածությունները, հումքը վերամշակվում էր Սպիտակի շաքարի գործարանում: Երկրաշարժի արդյունքում գործարանը ամբողջովին ավիրվել է, իսկ ցանքատարածությունները գրեթե ամբողջովին վերացվել են: Զբաղվում են նաև անասնապահությամբ, մեղվաբուծությամբ:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Արևիկ

Ինդեքս՝ 2607